

Հաստատուն մարմնոց . կարծէ եղեր թէ անոնք գոյնզգոյն ներկերով ներկուած լաթեր կամ թղթեր են . ուստի պատկեր մը տեսնելուն պէս՝ մէկէն ձեռքով կը շօշափէ ու կը զարմանայ եղեր թէ ինչպէս կ'ըլլայ որ անոր մէջի նիւթերը այլևայլ ձևերով երևան աչքին , ու ձեռքով շօշափած ատենը տափակ լաթ կամ թուղթ գտնէ . կը հարցնէ եղեր որ արդեօք աչքս է զիս խաբողը թէ ձեռքս : Ընչի բերան ամենեւին չուզեր եղեր սաստիկ լոյս տեսնել , ու ամէն բան չափէ դուրս մեծ կ'երևնան եղեր աչքին . բայց երբոր անոնցմէ ալ մեծ բաներ կը տեսնէ՝ առջիններուն պատկերութիւնը կը հասկընայ եղեր : Տարիէ մը ետքը աս տղուն մէկալ աչքն ալ բացեր են , ու նոյնպէս յաջողեր է . բայց ուշ բացուած աչքովը առջի բերան աւելի խոշոր կը տեսնէ եղեր բաները՝ քան թէ առջի աչքովը . իսկ երկու աչքով մէկէն ամէն բան աւելի խոշոր կը տեսնեմ կ'ըսէ եղեր՝ քան թէ մէկ աչքով :

Եր աչքին գործարանին զարմանալի յատկութիւնները տեսաբանութեան մէջ կը մեկնուին , որ բնաբանութեան մէկ մասն է . մենք յուսանք որ ուրիշ անգամ անոր սկզբունքներուն վրայ ալ տեղն 'ի տեղը խօսելու առիթ կ'ունենանք :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սանիթա :

ՊԱՐԿԱՒՈՐ՝ կենդանեաց կրկնափոր՝ ըսուած կարգը տասնըութը ցեղ կը բաժնուի . ասոնց ամենուն ալ գլխաւոր յատկութիւնը աս է , որ ինչպէս ուրիշ անգամ ըսինք , փորերնուն տակը պարկի պէս ուրիշ փոր մըն ալ ունին ու անոր մէջ կը պահեն իրենց ձագերը՝ ինչուան որ մեծնան :

Եսոնց մէկ տեսակն ալ ան է որ գաղղիարէն Սանիթու կամ Սարիկը սուրի : Հասարակ կատուի չափ է . բայց վրայի բուրդերուն տնկուած կենալուն համար խիստ հաստ կ'երևնայ : Եոյնը մութ ճերմակ է . գլուխը երկայն , բերանը լայն . պոչը մէկ ոտնաչափ երկայնութիւն ունի , կէսը բրդոտ՝ կէսէն անդին կոշտ կաշի . ոտուղները կարճ՝ ու մոխրագոյն են , ու ճանկերը խիստ սուր :

Ե կենդանին գետնի վրայ շուտ չկրնար քալել . բայց ծառերուն վրայ շուտ շուտ կը ցատքըտէ : Սաստիկ թշնամի է թռչուններուն . ուստի անդադար թռչուն կը բռնէ , արիւնը կը ծծէ՝ միսը կը թողու . բայց պտուղ ու արմատ ալ կ'ուտէ :

Ե որ մէկը ետեւէն վազէ կամ յանկարծ բռնէ , մեռած կը ձևանայ . և իրաւցընէ ողջ ըլլալը ամենեւին չի մացընէր կ'ըսեն՝ թէ պէտ և տաքցուցած երկըթի վրայ դրուի : Ել թէ որ էգ է ու փորուն տակի պարկին մէջ ձագերը պահէր է , աւելի կ'ընտրէ անոնց հետ մէկտեղ խորվիլ՝ քան թէ ձեռք իյնալ : Բայց թշնամին քովէն հեռացածին պէս՝ կը ցածին չափ արտորնօք կը վազէ , մէկ ծակ մը կամ թուփի մը մէջ կը մտնէ :

Եգը իր ձագերը չբերած՝ փորուն պարկը խոտերով կը լեցընէ ու կռնկի վրայ կը պառկի . արուն ալ անոր պոչէն կը քաշէ ինչուան պատրաստած բոյնը կը տանի : Ձագերը ցընկնածնուն պէս՝ իրենց մօրը պարկը կը մտնեն , ու հոն անոր ծիծերուն կը փակչին կը մնան երկայն ատեն ինչուան որ ոյժ առնեն ու վրանին բուրդ ելլէ : Ել անկէց ետքը միայն թշնամիներէ խալըսելու համար ան պարկը կը մտնեն : Սայրերնին սիրով ներս կ'առնէ զիրենք , իրենք ալ ներսը կը խաղան : Ե որ յանկարծ ատեն չունենան պարկը մտնելու , ան ատեն իրենց մօրը պոչին կը փակչին որ հետը մէկտեղ փախչին ազատին :



Սանիտար կամ Սարիկ:

Այրբեմն ինչուան տասնուվեց ձագեր ջնկնի, ամէն մէկը գրեթէ մէկ ցորենաչափ ծանրութեամբ. ասոնք յիսուն օր իրենց մօրը ծիծերուն կպած կը մնան, ետքն ալ ինչուան որ մկան չափ մեծնան՝ իրենց մօրը պարկին մէջ կը կենան:

Սէկ տեսակը կայ որ ձագերը պարկէն դուրս ելլէին ետքը՝ անոնց պոչերը իր պոչին կը կապէ, զիրենք կըռնակը կը շալկէ ու անանկ կը քալօրնէ:

Եւ մանիքու ըսուած կենդանին խիստ սրտոտ կ'երևնայ ու դժուար կը մեռնի. ուստի Վարդինա կըղզիին մէջ առակ եղեր է թէ, « Ի՞նչ որ կատուին կեանքը ինն է, մանի-

քուինը տասնուինն է »: Սայրենի մարդիկ ասոր մօրթը կը հիւսնեն՝ կը ներկեն, ու անկէ իրենց գօտի և ուրիշ զարդեր կը շինեն:

Եւոր աս կարգը Վերիկայի կենդանիներ են, ու ընդհանրապէս ամէնքն ալ խիստ գարշահոտ ու տգեղ: